

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱԳՈՒ «ԳԻՐՔ ՊԱՀՈՅ» ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՐԿԻ
ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Հայ Առաքելական եկեղեցու համաքրիստոնէական տօնելի սուրբ հայրերից («Երկոտասան վարդապետք»), ընդհանրական եկեղեցու նշանաւոր հայրապետներից երեւելի Բարսեղ Կեսարացին ծնունդ է 329 թ. Կեսարիայում (Կապադովկիայ)՝ քրիստոնէական բարեպաշտութեամբ եւ առաքինութեամբ հռչակուած յոյն քրիստոնէայ մեծահարուստ եւ ազնուական ընտանիքում: Նա յայտնի է նաեւ Սուրբ Բարսեղ, Բարսեղ Մեծ անուններով. «Ընդհանուր եկեղեցու պատմութեան մէջ Բարսեղ Կեսարացին կոչուել է Մեծն Բարսեղ եւ երկրորդ Աթանաս»¹:

Ընդհանրական եկեղեցու եւ համաքրիստոնէական աստուածաբանական մտքի պատմութեան մէջ Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նիւսացին եւ Գրիգոր Նազիանզացին յայտնի են «Կապադովկեան հայրեր» կամ «Երեք մեծ կապադովկացիներ» անունով. նրանց առաջնորդը Բարսեղ Կեսարացին էր:

Բարսեղ Կեսարացին թողել է հարուստ գրական ժառանգութիւն՝ մեկնութիւններ, դաւանաբանական, ծիսագիտական, կանոնադրական գործեր, ճառեր, ներբողներ, քարոզներ, զրոյցներ, նամակներ: Նրա ստեղծագործութիւնների մէջ իւրայատուկ տեղ ունեն աստուածաշնչեան մեկնութիւնները: Դրանցից առաւել յայտնի է ինը ճառից բաղկացած «Վեցօրեայք»-ը, որը, ըստ Ծննդոց գրքի (1.1-26) Արարչագործութեան վեց օրերի աստուածաբանական, փիլիսոփայական, բնագիտական մեկնութիւնն է:

Հայագէտների տեսակէտներն ու կարծիքները Կեսարացու ստեղծագործութեան թարգմանութեան մասին ի մի է բերել հայագէտ Կ. Մուրադեանը: Նա փորձել է պարզել, թէ ինչպիսի «Գրչագիր վկայութիւններ կան Կեսարացու գործերի հայերէն թարգմանութիւնների մասին»²: Իր այս ուսումնասիրութեան մէջ Կ. Մուրադեանը նշում է, որ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութիւնների վերաբերեալ յիշատակութիւններ կան ՆՃԲ-ում, այս հարցին անդրադարձել են նաեւ նշանաւոր հայագէտներ Գ. Զարփահանալեանը, Ա. Ակինեանը, Ա. Սուքրեանը, Հ. Գաթրճեանը եւ ուրիշներ՝ ամրագրելով այն տեսակէտը, որ Բարսեղ Կեսարացու գործերը սկսուել են թարգմանուել դեռեւս V դ.: Յիշատակում են Բարսեղ Կեսարացու գործերի թարգմանիչներից մի քանիսի անունները՝ Խոսրով թարգմանիչ, Դաւիթ Տարօնացի, Ստեփանոս Սիւնեցի, որոնց մասին հանգամանալից տեղեկութիւններ կարող ենք քաղել Կ. Մուրադեանի ուսումնասիրութիւնից:

Սուրբ Բարսեղ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութեամբ առաջինը զբաղւել է Ս. Սահակ Պարթեւը «իր ձեռքով» եւ կամ նրա «խորհրդով» ուրիշները³:

Այսպիսով, Բարսեղ Կեսարացու երկերը հայերէն են թարգմանուել 5-րդ դարից

¹ Հատիտեան Ա., Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի. ժամանակաշրջանը, կեանքն ու գործունէութիւնը, Էջմիածին հանդէս, 1977, էջ 27:

² Մուրադեան Կ., Գրչագիր վկայութիւններ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութեան մասին, Լաբեր Հասարակական Գիտութիւնների, № 10, էջ 50:

³ Մուրադեան Կ., Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1976, էջ 26:

սկսած: Երեւանի Մատենադարանում են զետեղուած նրա՝ աւելի քան 200 հին ու նոր գրչագիր մատենաներ: Յայտնի են Բարսեղ Մեծի հայերէն թարգմանուած երկերից «Վեցօրեայք»-ը (առաջին անգամ տպագրուել է Վենետիկում, 1830 թ.), «Պատարագամատոյցք»-ը (1897 թ.), «Գիրք հարցողաց»-ը, «Պահոց» ճգնակեցական հրահանգների ժողովածուն, կանոններ, աղօթքներ եւ այլն: Նրա մի քանի ճառեր եւ գործերից որոշ հատուածներ են պահպանուել Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւն» երկում, «Կնիք հաւատոյ» ժողովածուում եւ այլուր:

Հայ թարգմանական մատենագրութեան նշանաւոր գործերից է Բարսեղ Կեսարացու «Պահոց գիրքը» («Գիրք պահոց»): Որոշ ձեռագրերում, ինչպէս նաեւ տպագրական գրականութեան մէջ հանդիպում են նաեւ այս գրքի Վասն պահոց, Պահոց անունները: «Այն բովանդակում է հեղինակի հիմնականում ճառական-մեկնողական գործերը (ոչ բոլորը), ինչպէս նաեւ որոշ թղթեր եւ դաւանական բնոյթի հարցումներ (ընդհանուր հաշուով 33 բնագիր): Ժողովածուի կազմութեան ժամանակի ու հանգամանքների, նիւթերի ընտրութեան ու դասդասման մասին որեւէ ուղղակի յիշատակարան-յիշատակագրութիւն չի պահպանուել»⁴: Ենթադրում է, որ ժողովածուն կազմուել է 650-660-ական թթ.: Երկը «Պահոց գիրք» է կոչուել ըստ առաջագիր «Յաղագս պահոց» ճառի:

Այժմ յայտնի են «Պահոց գրքի» աւելի քան 50 ամբողջական եւ թերի ընդօրինակութիւններ: Զեռագրական ամենահարուստ շտեմարանը Մաշտոցեան Մատենադարանն է, որտեղ էլ պահուում են գրքի շուրջ 30 գրչագրերը: Բարսեղ Կեսարացու նշեալ գրքի ընդօրինակութիւններ կան նաեւ Վենետիկի, Երուսաղէմի, Վիեննայի, Նոր Զուղայի եւ այլ ձեռագրատներում. ընդհանուր առմամբ 22 ձեռագիր: «Պահոց գրքի»՝ հայագիտութեանը յայտնի հնագոյն ձեռագիրը (№ 251, 1172 թ.) պահուում է Մխիթարեան միաբանութեան Վենետիկի մատենադարանում: Իսկ Երուսաղէմում գրտնուող 6 ձեռագրերում պահպանուած է միայն ժողովածուի առաջին ճառը:

Մենք օգտուել ենք Կ. Մուրադեանի հեղինակած քննական բնագրից. «Սոյն հրատարակութեան հիմքում ընկած են Մաշտոցեան Մատենադարանի բոլոր ձեռագրերը, ինչպէս նաեւ Վենետիկի նշուած հնագոյն երկաթագիրը»⁵:

Կ. Մուրադեանի կազմած սոյն ժողովածուն ընդգրկում է 33 թարգմանական բնագիր՝ ճառ, թուղթ, մեկնութիւն, հարցում: Բարսեղ Կեսարացու՝ «Պահոց գրքում» զետեղուած ճառերն ունեն դաւանաբանական, քարոզչական, վարքագրական, բարոյագիտական, կանոնագիտական, ծիսագիտական, մանկավարժական բովանդակութիւն: Նրա այս ստեղծագործութիւնները, մինչ այս ժողովածուն, միասնական, ամբողջական տարբերակով չեն հրատարակուել. սոյն հաւաքածուն Կեսարացու վերոնշեալ գործերի առաջին համահաւաք ամբողջութիւնն է:

Հայագիտութեան մէջ արձանագրուել է, որ Ագաթանգեղոսը, Փաւստոս Բուզանդը եւ այլք օգտուել են Կեսարացու ծիսական-արարողական ժանրի գործերից: «Պահոց գրքի» հետքեր կան 5-13-րդ դդ. հայ ինքնուրոյն գրականութեան մէջ, յատկապէս Սահակ Պարթեւի, Մովսէս Խօրենացու, Յ. Մանդակունու, Յովհ. Օճնեցու, Ստ. Սիւնեցու, Գր. Նարեկացու, Ստ. Ասողիկի, Վ. Այգեկցու, Վանական Տաւուշեցու, Յովհ. Երզնկացու եւ այլոց դաւանաբանական երկերում: Այս վկայութիւններից ելնելով հարկ է նշել, որ Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» աշխատութեան գրաբարեան թարգմանութիւնը պատկանում է Ա շրջանի թարգմանութիւնների շարքին՝ վկայակոչուած լինելով դեռեւս 5-րդ դարի հայ մատենագիրների բնագրերում արդէն իսկ հայերէն թարգմանութեամբ:

⁴ Հմմտ. Մուրադեան Կ. // Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, Էջմիածին, 2008, էջ 7:

⁵ Մուրադեան Կ. // Բարսեղ Կեսարացի, նշուած աշխ., էջ 8:

Երկը հայերէն է թարգմանուել գրերի գիւտից գրեթէ անմիջապէս յետոյ, քանի որ, ինչպէս արդէն նշեցինք, երկը տարբեր բնոյթի գործերի ժողովածու է, որտեղ ընդգրկուած են թղթեր, ճառեր, հարց ու պատասխաններ, որոնք, թարգմանելուց բացի, անհրաժեշտ էր ի մի բերել, խմբաւորել «Գիրք պահոց» վերնագրի ներքոյ՝ որպէս մէկ գիրք:

Բարսեղ Կեսարացու եւ նրա գործերի մասին ամփոփ մեր շարադրանքը եզրափակենք հետեւեալ դիպուկ մէջբերումով. «Որքա՛ն ճիշտ ու գեղեցիկ է ասել ս. Գրիգոր Նազիանզացին, երբ 370 թուականին Կեսարացու Կապադովկիայի Աթոռի վրայ մետրոպոլիտի ընտրութեան առիթով որոշ հակառակորդներ եւ հերետիկոսներ, նախանձից դրդուած, դէմ էին այդ ընտրութեանը. «Բարսեղը, տկար է, այո՛, բայց մենք հոգեւոր առաջնորդ եւ կրօնի ուսուցիչ ենք ընտրում եւ ոչ թէ՛ ըմբշամարտ»»⁶:

Այժմ անդրադառնանք մեր ուսումնասիրութեան բուն խնդրին՝ Կեսարացու երկի գրաբարեան թարգմանութեան հոլովական համակարգի իւրայատկութիւններին:

Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկը, որը դասուում է նախայունաբան շրջանի թարգմանութիւնների շարքը, եզակի է իր ոճով եւ քերականական-շարահիւսական կառուցներով: Հմուտ թարգմանիչները ջանք չեն խնայել երկի լեզուն մատչելի, միաժամանակ գրաբարեան հիմնական քերականական օրինաչափութիւնները պահպանելով՝ գեղարուեստական պատկերներ ստեղծելու, խօսքն առաւել դիպուկ դարձնելու համար:

Նախ՝ երկու խօսք գրաբարեան հոլովական համակարգի մասին:

«Առականների, երեւոյթների ու նրանց յատկանիշների անունների բառական զանազան փոփոխութիւնները դրսեւորելու համար լեզուն ունի տարբեր միջոցներ: Դրանցից մէկը հոլովումն է, որի շնորհիւ անունները նախադասութեան մէջ բառային փոփոխութիւններ են կրում»⁷:

Գրաբարի քերականութեան պատմութեան մէջ հոլովների ըմբռնման տարբեր տեսակէտներ են եղել: Որոշ քերականներ ընդունում էին վեց, հոլով, ոմանք՝ տասը միւսները՝ եօթ հոլով: Հիմնականում ընդունուած էին՝ ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովները: Վերջինը՝ ներգոյականը, որոշ քերականներ չեն առանձնացրել իբրեւ առանձին հոլով, համարելով, որ այն նախդրային կիրառութիւն ունի եւ եթէ ընդունուի այս հոլովը, ապա պիտի քերականութեան մէջ մըտցնել նաեւ նախդիրներով կազմուող պատմական, պարառական, կոչական հոլովները: Գաբրիէլ Աւետիքեանը 1815 թ. հրատարակած իր «Քերականութիւն հայկական» գրքում պատմական, պարառական, ներգոյական եւ կոչական հոլովներ չի համարում: Նրա առաջարկութիւնը ընդունում է նաեւ Ա. Աբրահամեանը: Ահա թէ ինչպէս է Ա. Աբրահամեանը հաստատում Աւետիքեանի տեսակէտի իրաւացի լինելը. «Այդ մերժուած հոլովներից 3-ը նախդրաւոր կապակցութիւններ են... Հոլովը որպէս քերականական կարգ հանդէս է գալիս քերականական ձեւի ու բովանդակութեան միասնութեամբ, ուստի այն որոշելիս պէտք է նկատի ունենալ ձեւա-իմաստային յատկանիշները: Այս պատկերացմամբ մօտենալով խնդրին՝ չի կարելի յիշեալ չորս «հոլովներ»-ը ընդունել որպէս առանձին հոլովաձեւեր»⁸:

Առաջնորդուելով այս դիրքորոշմամբ՝ մենք եւս վեց հոլովի տեսութեամբ ենք քնննել Կեսարացու երկի գրաբարեան թարգմանութեան հոլովման համակարգը:

Գրաբարում հոլովուում էին գոյականները, ածականները, թուականները, դե-

⁶ Յատիտեան Ա., Սուրբ Բարսեղ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութիւնները, Էջմիածին հանդէս, 1977, էջ 32:

⁷ Աբրահամեան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 15:

⁸ Նոյն տեղում, էջ 16:

րանունները, դերբայները: Լինելով թեքական լեզու՝ մեր հին մայրենին հարուստ էր հոլովիչների համակարգով, քերականական համաձայնութեամբ: Հին հայերէնում ունենք կանոնաւոր (պարզ եւ խառն) եւ անկանոն (զարտուղի) հոլովումներ:

Հոլովման վերաբերեալ Վ. Առաքելեանն իր «Գրաբարի քերականութիւն» աշխատութեան մէջ նշում է հետեւեալը. «Գրաբարի հոլովումը բաժանուած է երկու հիմնական խմբի՝ ձայնաւոր եւ բաղաձայն: Սրանք միմեանցից տարբերուած են նրանով, որ դրուած են ձայնաւոր հիմքերի վրայ, իսկ բաղաձայնական հոլովման մէջ հոլովական վերջաւորութիւնը միանում է բաղաձայնական հիմքին: Հոլովման ժամանակ բառը երեք մասի է բաժանուած՝ հիմք, հիմքի ձայնաւոր կամ բաղաձայն հնչիւն եւ հոլովական վերջաւորութիւն»⁹:

Քանի որ մեր ուսումնասիրութեան առարկայ երկը թարգմանութիւն է յունարէնից, ուստի հարկ է նշել նաեւ յունարէնի նմանողութեամբ գրաբար ներմուծուած հոլովաձեւերի մասին: Ինչպէս փաստում է Վ. Առաքելեանը՝ «Դասական գրաբարում յունական յատուկ անունների գործածութեան ընթացքում թափանցել են հայերէնին խորթ յունական հայցական եւ կոչական հոլովաձեւերը, որոնք ուղղականից տարբերուած են»¹⁰:

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձեւն է՝ յօդով կամ առանց յօդի գործածութեան: Յոգնակին կազմուած է ք վերջաւորութեամբ:

Եզակի հայցականը նման է եզակի ուղղականին, եթէ կիրառուած է անորոշ առումով, իսկ որոշեալ առումով կիրառուելիս բառասկզբում աւելանում է զ նախդիրը: Յոգնակի հայցականն ունի ւ վերջաւորութիւնը:

Սեռական-տրական հոլովը եզակի թուում կազմուած է ուղղականից՝ հոլովիչ ձայնաւորի եւ վերջաւորութեան աւելացմամբ, կամ էլ՝ հնչիւնափոխութեամբ: Յոգնակի սեռական-տրականի վերջաւորութիւնն է ց: Այս կանոնից շեղուած են անկանոն հոլովման պատկանող բառերը:

Բացառական հոլովը կազմուած է ի նախդիր + սեռական/տրականի վերջաւորութիւն կաղապարով: Յոգնակի թուում ստանում է ց վերջաւորութիւնը:

Գործիական հոլովը կազմուած է վ, լ, ք վերջաւորութիւններով, որոնք դրուած են հիմքի ձայնաւորի/բաղաձայնի վրայ: Յոգնակիի կազմութեան ժամանակ աւելանում է ք մասնիկը:

Ներգոյական հոլովը կազմուած է ի նախդրով՝ եզակի թուում՝ տրականից կամ հայցականից (այ, ոյ, ու-այ խառը հոլովման ենթարկուող բառերի դէպքում), իսկ յոգնակին կազմուած է յոգնակի հայցականից:

Կեսարացու երկուստեք վկայուած է բոլոր խօսքի մասերի հոլովական ձեւերի բազմազանութիւնը՝ գոյականներ, ածականներ, թուականներ եւ դերանուններ:

Ուղղական եւ հայցական հոլովների եզակի եւ յոգնակի կազմութեան դէպքերում որեւէ առանձնաշատկութիւն կամ օրինաչափութիւններից էական շեղումներ չենք արձանագրել: Հայցական հոլովաձեւը կարող էր կիրառուել եւ որոշեալ, եւ անորոշ առումներով, այսինքն՝ եւ զ նախդրով, եւ աննախդիր: «Քանզի տնկէաց այգի Նոյ եւ արք ի պտղոյն, եւ արբեցաւ ոչ զինեսէր, այլ ամփոռն չափոյ ընդունելութեանն» (էջ 61): «Ասացաւ առ հարսն, որ ասացաւ, իսկ անորդիքն զինչ մեզ բարեղէմ պատճառս ազանութեան առաջի արկանիցեն» (էջ 162):

⁹ Առաքելեան Վ., Գրաբարի քերականութիւն, Երեւան, 2010, էջ 17:

¹⁰ Նոյն տեղում, էջ 85:

Սեռական-տրական հոլովի վերաբերեալ ընդգծենք հետեւեալը. որոշ անձնանուններում բառավերջի յ-ն, որը հոլովակազմիչ էր **ո եւ ա** հոլովիչների պարագայում, երբեմն վկայուած չէ՝ Նսայէայ (էջ 54) յատկանունան դէպքում ծանօթագրութիւնների մէջ տրուած է նաեւ Նսայէա տարբերակը, որը ցոյց է տալիս տուեալ ժամանակաշրջանում բառավերջի յ-ին վերաբերող գրաբարեան կանոնի ուժը կորցնելը: Ա հոլովման վերաբերեալ Գ. Զահուկեանը նշում է, որ այն «Նոր ձեռքբերում է՝ կազմաւորուած փոխառեալ անունների բազայի վրայ»¹¹: Նսայի անձնանունը, լինելով փոխառեալ, ունէր սեռական-տրականի կազմութեան իւրայատկութիւն: Գրաբարին բնորոշ օրինաչափութիւն է եղել ա հոլովման բառերի սեռական հոլովի յ վերջաւորութեան լիահունչ արտասանութիւնը, ինչով էլ պայմանաւորուած է եղել բառի ուղիղ եւ թեք ձեւերի տարբերութիւնը: Սակայն այս կանոնը լեզուի պատմական զարգացման ընթացքում դադարել է գործելուց: Այսպիսով՝ «Մի դէպքում աչ-ը հանդէս է գալիս իբրեւ լրիւ սեռականի վերջաւորութիւն՝ ուժեղ անուանական շեշտումով. Արշակ-Արշակայ, երկրորդ դէպքում ունենք անուանական շեշտուած ա, որին աւելանում է յ վերջաւորութիւնը. Յուդա-Յուդայ»¹²:

Բերենք սեռական-տրական հոլովաձեւի կազմութեան բնագրային այլ օրինակներ՝ ի ցոյց դնելու դասական գրաբարի կանոնների թուլացումը, որն ապացուցում է որոշ թարգմանական հատուածների՝ 7-րդ դարից յետոյ ընկած ժամանակաշրջանին պատկանելը. աղբառոյ (էջ 127), աղիւծոց (էջ 66), աղիւծոց (էջ 67), այրոյն (էջ 64), գագաթան (էջ 62), գիւնոյ (էջ 61), դուզնաւոյ (էջ 143), երայեցոց (էջ 103), թագուհոյ (էջ 103), ժամանակեայ (էջ 113), մաւր (էջ 63), մահու (էջ 375), մարդկանց (էջ 139), միայնոյ (էջ 112), ցորենոց (էջ 139): Քննենք բերուած օրինակները:

Անկանոն հոլովման պատկանող բառերից են այրոյ (էջ 64), մաւր (էջ 63) բառերը: Երկրորդ բառը կիրառուած է ըստ գրաբարեան կանոնի՝ մայր-մաւր, այնինչ առաջին դէպքում ունենք այր բառի ակնյայտ կանոնաւորում: Զարտուղի հոլովման ենթարկուող այր բառը հոլովուում էր **ն** վերջադրական հոլովակերտի միջոցով, իսկ այ երկբարբառը պարզեցւում է՝ աչ>այ: Հետեւաբար՝ այս բառի սեռական-տրական հոլովաձեւն էր առն, իսկ Կեսարացու երկի գրաբարեան թարգմանութեան մէջ այն կանոնաւորուած է ոյ հոլովիչով՝ այրոյ: Ահա բնագրային նախադասութիւնը՝ «Պահել ոչ ետ այրոյն զմանուկն՝ զաւաւոր եղեալ ընդդէմ մահու պահովն» (էջ 64):

Ի-ա խառն արտաքին հոլովման է պատկանում աղբառ բառը, որը «Գիրք պահոց»-ում սեռական հոլովը կազմել է աղբառոյ (էջ 127) ձեւով: Ի-ա խառն հոլովումը «Գրաբարի ամենատարածուած հոլովումներից է. այս հոլովման ենթարկուում են ձեւային տարբերակում չունեցող բազմաթիւ գոյականներ եւ ածականներ՝ ազահ, ազատ, աղբառ...»¹³: Ըստ կանոնի՝ այս բառի սեռական-տրականը պիտի լինէր աղբառի, սակայն ունենք ը հոլովմանը բնորոշ վերջաւորութիւն: Պէտք է նաեւ նկատի ունենալ, որ ի-ա խառն հոլովման բառերը միջին հայերէնում անցնում են ի վերջադրական հոլովման. այսինքն՝ Կեսարացու երկում կիրառուած այս հոլովաձեւը, ամենայն հաւանականութեամբ, լեզուի խօսակցական կամ բարբառային բառաշերտերի ազդեցութեամբ է կազմուել:

Ա ներդրական հոլովման է ենթարկուում մարդ բառը, երբ ունենում է -իկ մասնիկը, «Ըստ որում՝ թեք հոլովներում հանդէս է գալիս եզակի ձեւով, սակայն արտայայտում է

¹¹ Զահուկեան Գ., Հին հայերէնի հոլովման սխաւմը եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 225:

¹² Առաքելեան Վ., նշուած աշխ., էջ 27:

¹³ Արաքեան Ա., Դիլբարեան Ն., Իզբաշեան Ա., // Դիլբարեան Ն., Հայոց լեզուի պատմութիւն, Երեւան, 2017, էջ 325:

հաւաքական իմաստ»¹⁴։ Հարկ է նշել, որ այս բառը հոլովուում է նաեւ ոչ հոլովիչով, եթէ իկ մասնիկը չունի՝ մարդ/մարդ - մարդոյ/մարդոց։ Այնինչ՝ մեր ուսումնասիրութեան առարկայ երկուսն առկայ է մարդկանոց (էջ 139) հոլովածելը, որն իր մէջ ներառել է իկ մասնիկը եւ միաժամանակ հոլովուել ոչ հոլովիչով, եւ, դեռ աւելին, գերճշգրտամբ, ստացել է Ն, ինչպէս ոչ եւ ու-ա հոլովման ի յանգով բառերը։ Այս երեւոյթը եւս կարելի է համարել ժամանակի ժողովրդա-խօսակցական լեզուի ազդեցութիւն, թէեւ չենք կարող բացատրել նաեւ գրչագրական վրիպակը։

Ուշագրաւ է ևս պարզ հոլովիչով հոլովուող բառերի կիրառութիւնը Կեսարացու երկում՝ դուգնափոյ (էջ 143), երալեցոց (էջ 103), թագունոյ (էջ 103), ցորենոց (էջ 139)։ Նշուած այն ձեւերը, որոնք իրենց կազմում ունեն ւ մասնիկը, ծանօթագրութիւններում յիշատակուած են առանց դրա՝ դուգնափոյ (էջ 143), երալեցոց (էջ 103), ցորենոց (էջ 139), իսկ նրանք, որոնք չունեն ւ՝ յիշատակուած են ւ-ով՝ թագունոյ (էջ 103)։ Տուեալ դէպքում ակնյայտ է դասական գրաբարեան հոլովման կանոնների խառնակումը նախամիջին շրջանի գրաբարում։ Հայերէնի զարգացման յետագայ ընթացքում բառավերջի ի>ւ հնչիւնափոխութիւնը ու հոլովիչի ազդեցութեամբ դադարում է գործել, եւ ի-ն ոչ-ից առաջ ընկնում է։

Մեր ուսումնասիրած թարգմանական երկում հոլովական տարածելութիւնների պատճառ համարել ենք նաեւ բնագրի լեզուն՝ յունարէնը։ Ձեւաբանական, աւելի որոշակի՝ հոլովական յունաբանութիւններին մանրամասն անդրադարձել է Գ. Մուրադեանն իր «Յունաբանութիւնները դասական հայերէնում»¹⁵ մենագրութեան մէջ։ Նա նշում է, որ տրական հոլովի համար յոյժ կիրառելի էր «ոււմ» վերջաւորութիւնը, «Յունաբան դպրոցի երկրորդ եւ երրորդ խմբի թարգմանութիւններում «ոււմ»-ը լայնօրէն օգտագործուել է գոյականների, ածականների եւ դերբայների հետ։ Երբեմն նոյն դերում հանդէս է եկել նաեւ է՛լ աւելի հազուադէպ «ոջ» վերջաւորութիւնը։ Այս նորամուծութեան նպատակն, անշուշտ, եզակի սեռականի եւ տրականի տարբերակումն է»¹⁶։ Կեսարացու երկում հանդիպող նմանատիպ բառերից են՝ յառաջնում (էջ 131), փութացելում (էջ 370), յեկաթում (էջ 421-422), յեկորոյում (էջ 131), յեթմեորոյում (էջ 57), յորպիսի մարմնում (էջ 437), ի գիւնոյ (էջ 79), ի խորոյ կայսն (էջ 109), ի մարմնում (էջ 421-422), ի նորում (էջ 125), ի տարոյ (էջ 68)։ Սրանք, փաստօրէն, իրենցից ներկայացնում են ներգոյականի կազմութեան իւրօրինակ ձեւեր՝ ի նախդիր + տրական կաղապարով։ Փաստօրէն, գրաբարի նախամիջին շրջանում արդէն ձեւաւորուել էին աշխարհաբարեան ներգոյական հոլովի -ում մասնիկի կիրառութեան դէպքերը։

Անդրադառնանք բացառական հոլովի գործածութեան բնագրային օրինակներին. ի յալրեցուցանողէն (էջ 111), ի կնոջ (էջ 361), ի հիւանդութենէ (էջ 60), ի մարդկանէ (էջ 461), ի յանչափութենէ (էջ 102), ի սոցունց անկարութենէ (էջ 112), ի Տեառնէ (էջ 115), իմեմէ (էջ 325), յորմէ (էջ 137), որովայնէ (էջ 67), հայհոյութենէն (էջ 263)։ Կանոնաւոր ձեւերին զուգահեռ՝ բերուած օրինակներում ունենք նաեւ բնութագրական շեղումներ։ Յաճախադէպ են կրկնակի նախդիրների կիրառութեան դէպքերը, մասնաւորապէս՝ ձայնաւորով սկսուող բառերի դէպքում՝ յալրեցուցանողէն (էջ 111), ի յանչափութենէ (էջ 102)։ Հանդիպում է նաեւ առանց ի նախդրի՝ իմեմէ (էջ 325) ձեւով կազմուած բացառական հոլովով գերանունը, որովայնէ (էջ 67), հայհոյութենէն (էջ 263) գոյականները։ Արձանագրենք, որ բացառականի կազմութիւնը պարզեցման միտում ունէր. կորցնում էր նախդիրը։

¹⁴ Աբրահամեան Ա., նշուած աշխ., էջ 32։

¹⁵ Մուրադեան Գ., Յունաբանութիւնները դասական հայերէնում, Երեւան, 2010, էջ 101։

¹⁶ Նոյն տեղում, էջ 101։

Գտել ենք նաեւ բացառականի կազմութեան հնագոյն հետաքրքիր կառոյց՝ յերկնուստ (էջ 437): «Բացառականի համար պատահում է երբեմն ուստ վերջաւորութիւնը... Սրանք մեծ մասամբ մակբայական կազմութիւններ են»¹⁷: Այս տիպի կառոյցները կարող էին ստեղծուել նաեւ յունարէնի նմանութեամբ, թէեւ հայկաբան ծագումը բացառւած չէ:

Առաւել բազմազան են գործիական հոլովի կազմութեան ձեւերը Կեսարացու գրաբար թարգմանութեան լեզուում: Բերենք գրաբարեան գործիականի կազմութեան եւ դասական, եւ յետդասական զարտուղի օրինակներ՝ առաւստաւ (էջ 96), բարիոն (էջ 110), գիմեաւ (էջ 101), գիմուլ (էջ 102), գոյիւ (էջ 136), թնամեաւ (էջ 92), իմաստիւ (էջ 109), լսելով (էջ 110), հաշտեցուցանողաւ (էջ 92), ձեղումը (էջ 120), ձեռում (էջ 144), ոմամբ (էջ 55), մարամբ (էջ 62), նշամաւ (էջ 62), նուազիւ (էջ 131), շնորհաւ (էջ 147), ոտիւ (էջ 96), շարեաւ (էջ 91), վերակացուաւ (էջ 92), տերամբ (էջ 94), Քրիստոսի Յիսուսի (էջ 94):

Այս թարգմանութեան լեզուն աներկբայ վկայում է, որ ը-ա խառն հոլովման միաձուլումը ը հոլովման հետ 7-րդ դարում արդէն ընթանում էր. «Գիրք պահոց»-ում հաւասարապէս կիրառելի են գինի բառի գործիականի գիմեաւ (էջ 101) եւ գիմուլ (էջ 102) տարբերակները:

Հետաքրքրական է առաւստնով՝ ծանօթագրութեան մէջ առաւստնով (էջ 93) կառոյցը, որն արտայայտում է յոգնակի գործիականի իմաստ: ն-ի առկայութիւնը բառում վկայում է նրա՝ յոգնակերտ մասնիկի մասին՝ առաւստնի, այս ձեւին էլ գումարուել է նաեւ գրաբարեան ք-ն՝ առաւստներով: Նման կառոյցները խօսակցական-բարբառային լեզուի եւ գրական գրաբարի փոխազդեցութեան արդիւնք են:

Շնորհաւ (էջ 147) բառի համար իբրեւ գործիական յիշատակում է նաեւ շնորհիւ կանոնաւոր հոլովաձեւը: Այսինքն՝ ունենք նաեւ ը-ա եւ ը հոլովումների միաձուլման հետքեր. 7-րդ դարում ակնյայտ էր խառն հոլովումների վերացման իրողութիւնը, հայերէնի հոլովական համակարգը գնում էր դէպի անշեղ պարզեցում:

Ներգոյական հոլովի կիրառութեան մեզ հանդիպած հետաքրքիր օրինակներից են հետեւեալները՝ ի սրտին (էջ 2643), ի մերում սիրտս (էջ 203), ի յազմականութիւն (էջ 115), ի յաղաթս (էջ 106), ի պատերազմունս (էջ 63), ի պահքս (էջ 77), ի ջերինս (էջ 109), ի սրտի բում (էջ 110), յեկեղեցոյ (էջ 115), յերիս ամս (էջ 129): Նշենք, որ «Եզակի ներգոյականը նման է մասամբ եզակի հայցականին, մասամբ եզակի տրականին, երբեմն նոյն բառը երկուսին եւս, մասամբ էլ առանձին կազմութիւն ունի, օրինակ՝ ի ջուր, ի քաղաքի, յայգուջ = ջրում, քաղաքում, այգում»¹⁸: Իսկ յոգնակի ներգոյականը հիմնականում նման է յոգնակի հայցականին: Սակայն այս ընդհանրական կանոնից բազմաթիւ շեղումներ կան մեր քննած բնագրում: Այսպէս՝ ի բոց (էջ 70) ներգոյականի համար նշում է նաեւ ի բոցոյ տարբերակը, որը դասական գրաբարում բացառականի հոլովաձեւ էր: Սակայն քանի որ ծանօթագրութիւններում նշուած են կանոնաւոր ձեւերը, մենք այս տիպի շեղումները կարող ենք համարել գրչագրական վրիպակներ, գրիչների գրագիտութեան եւ գրաբարի իմացութեան մակարդակը միանշանակ չի եղել: Ինչպէս բացառական հոլովի դէպքում, ունենք ներգոյականի կազմութիւններ կրկնակի նախդրով՝ ի յազմականութիւն (էջ 115), ի յաղաթս (էջ 106), որտեղ ձայնաւորով սկսուող բառերը ստացել են ի նախդիրը՝ մի դէպքում այն դարձել է յ, ինչպէս եւ պէտք է լինէր, եւ բացի դրանից՝ այդ յ-ից առաջ աւելացրել են եւս մէկ ի նախդիր: Գէրճզարտումներ են կատարել:

¹⁷ Աբեղեան Մ., Երկեր Զ, Գրաբարի փրակաւորութիւն, Երեւան, 1974, էջ 758:

¹⁸ Նոյն տեղում, էջ 759:

Քննենք նաեւ Կեսարացու թարգմանական երկում գրաբարեան դերանուանական հոլովման դրսեւորումները: Նախ եւ առաջ նշենք, որ դերանուանական հոլովման են պատկանում անձնական (ես, դու, նա իմֆն, իւր), ցուցական (այս, այդ, այն, սոյն, նոյն, դոյն, սա, դա, նա) դերանունները, անորոշ դերանուններից ումն, ուֆ-ը՝ «եզակի թւում մինչեւ գործիականը դերանուանական հոլովմամբ, իսկ եզակի գործիականից՝ անուանական ա ներդրական հոլովմամբ»¹⁹, իմն, ինչ-ը, հարցա-յարաբերական դերանուններից ո/ով-ը, որը «արտայայտում է միայն անձերի իմաստ, գրաբարում պատկանում է դերանուանական հոլովման, չունի գործիական հոլով, այն փոխարինում է ու դերանուան եզակի եւ յոգնակի գործիականներով՝ որով/որովք»²⁰ եւ իրանիշ զի, զինչ ձեւերը:

Անձնական դերանունների վերաբերեալ ընդգծենք. «Անձնական դերանունները դերանուանական հոլովման դասական օրինակ են՝ տարահիմքութեամբ, եզակի թւում սեռական եւ տրական հոլովների տարբերակմամբ»²¹: Դերանուանական հոլովման դէպքում սեռական հոլովի համար հիմնականում իբրեւ ցուցիչ ունենք -ր հոլովակերտը, տրականում՝ -մ, բացառականում՝ -է, գործիականում՝ -ւ, -վ կամ -բ:

Բերենք դերանուանական հոլովման պատկանող տարբեր դերանունների բնագրային տարածուած օրինակներ՝ Քանգի որով կարծէին զնա խափանեալ, նովիմբ երեւեցան, նանապարհ առնել ելիցն (էջ 196), ...ամենայն իրաւ նոբաւ առ ի յիւրեանց վարին կամս (էջ 168), ...եկեալ մաղթ զայսաւոն ինքն եւ վաղիւն Տեառնն (էջ 432). այստեղ ունենք իմֆն անձնական դերանուան բարբառային տրականը, որին զուգահեռ՝ այլ ձեռագրում տրուած է կանոնաւոր իմֆեան ձեւը, ...Ընդէ՛ր ոչ զմատաւոր տնանկութիւնն յայնց պատնառաց լուծանես, ...ամենեքումբ այսոօֆ առաւել պայծառանայ (էջ 250). տուեալ օրինակում որոշեալ ամենին/ամենեքեան դերանուան կանոնաւոր գործիականն է եւ այս ցուցականի յոգնակի բարբառային գործիականը, որի փոխարէն այլ ձեռագրում վրկայուած է կանոնական այսոֆիւմ ձեւը, ուստի կարող ենք եզրակացնել, որ գրչագրական կանոնաւորում է: Չաւֆ կենդանագրացն ի կարատութենէն սննդեան ոնգացն կամ յումեֆ սպիոյ եւ ի կարեութենէ ի բնութենէս... (էջ 199) ...որպէս իւիք ծաղկաւ... (էջ 407), ...Ո՛ւմ վայ, ո՛ւմ ամբոխ... ո՛յր կապուտակ աչք... (էջ 101) եւ այլն:

Ինչպէս ակնյայտ է բերուած օրինակներից՝ Կեսարացու երկի թարգմանիչները հիմնականում պահպանել են գրաբարեան դերանուանական հոլովման համակարգի օրինաչափութիւնները, զուգաձեւութիւններն այս պարագայում շատ աւելի փոքրաթիւ են, որը վկայում է յետգասական շրջանում դերանուանական հոլովման համակարգի առաւել կայուն լինելու մասին՝ ի հակակշիռ անուանական հոլովման համակարգի, որտեղ բարբառային եւ խօսակցական կանոնաւորումներն ու հնչիւնափոխութիւնները աւելի մեծաթիւ էին եւ տարածուած:

Ամփոփելով մեր աշխատանքի այս բաժինը՝ մէջբերենք Վ. Առաքելեանի դիտարկումը. «Շատ անգամ ձեռագիր արտագրողները մի տեսակ արհեստաւոր գրիչներ էին, լաւ ձեռագիր ունեցողներ, որոնք արտագրութեան ժամանակ ակամայից փոխում էին այս կամ այն բառի հոլովումն՝ ըստ հոլովման իրենց կենդանի ըմբռնման եւ առաւել եւս որոշ հոլովումների նմանութեան շփոթումներով»²²: Ահա թէ որտեղից են գալիս տարբեր հոլովաձեւերի շփոթմունքները, մի հոլովի գործածութիւն մէկ ուրիշի փոխարէն, նոյնիսկ՝ դեռեւս անյայտ եւ միակ կիրառութիւնն ունեցող հոլովակազմութեան օրինակ-

¹⁹ Աբաջեան Ա., Դիլբարեան Ն., Յուզբաշեան Ա., // Դիլբարեան Ն., նշում աշխ., էջ 377:

²⁰ Դիլբարեան Ն., նշում աշխ., էջ 379:

²¹ Աբաջեան Ա., Դիլբարեան Ն., Յուզբաշեան Ա., // Դիլբարեան Ն., նշում աշխ., էջ 362:

²² Առաքելեան Վ., նշում աշխ., էջ 80:

ներ:

Այնուամենայնիւ, «Գիրք պահոց»-ում թէեւ կային հոլովակագմութեան տարաբնոյթ զուգաձեւութիւններ ու շեղումներ օրինաչափութիւններից, սակայն դրանք այնքան մեծաթիւ չէին. գրքի լեզուն դասական եւ յետդասական գրաբարի միախառնման ուշագրաւ դրսեւորում է: Կեսարացու երկի թարգմանիչները հմտօրէն միաձուլել են յետգրաբարեան քերականական կանոններով լեզուն ընթերցող-ժողովրդի համար հասկանալի կառոյցների հետ՝ համեմելով տարբեր ոճական շերտերին պատկանող բառերով ու բառաձեւերով, թարգմանութեանը հաղորդելով մեծ արժէք ուսումնասիրութիւններ կատարելու դիտանկիւնից:

Թէեւ երկի բնագիրը յունարէն է, սակայն հայերէն թարգմանութիւնը բնաւ չի զիջում բնագրին, աւելին՝ ունի պատկերաւորութիւն եւ ինքնօրինակութիւն. յունարէնը չի կարողացել իր ճնշող ազդեցութիւնն ունենալ նոր բառերի ստեղծման գործում՝ շնորհիւ բազմահմուտ, լեզուագէտ եւ հայրէնասէր թարգմանիչների տաղանդի: Մեր հետազօտութիւնն աներկբայ վկայում է, որ «Գիրք պահոց»-ը բարձրարժէք հայկաբան թարգմանութիւն է:

ԶԻՆԱ ՕՀԱՆԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի մագիստրոս

